

## Սայաթ-Նովայի խաղերի դարձվածքների քննություն

*Թորաբի Մարիամ*

*Հանգուցային բաներ. Սայաթ-Նովա, խաղ, դարձվածք, պարսկերեն, արաբերեն, խոսքի մասեր, Թիֆլիսի բարբառ*

### Նախաբան

Դարձվածքները և դարձվածային արտահայտությունները՝ իբրև վերաիմաստավորված կայուն բառակապակցություններ, ունեն լեզվի և մտածողության առանձնահատուկ կապ, և դրանք հնարավոր է հասկանալ ու բացատրել միայն տվյալ լեզվի ներքին օրինաչափությունների սահմաններում: Բառագիտական այսպիսի միավորները ժողովրդական լեզվամտածողության արդյունք են և ցանկացած ժողովրդի լեզվի ընդհանուր նկարագրի մասն են կազմում: «Դարձվածքային կապակցությունը սովորական բառից տարբերվում է իր կազմության բարդությամբ, իմաստի ու ձևի ընդարձակությամբ, արտահայտչական հարստությամբ: ...Դարձվածքներն իրենց էությամբ ծնունդ են առնում ժողովրդի ընդերքից և կրում են ժողովրդական ստեղծագործության խոր կնիքը»,- գրում է Սայաթ-Նովայի խաղերի բառարանի հեղինակ Ա. Քոչոյանը [7, 21], որը թվարկում է բանաստեղծի խաղերում գործածված մարմնի մասերով կազմված մի շարք դարձվածքներ:

Սայաթ-Նովայի տաղերգությանը բնորոշ պատկերավոր ոճը պայմանավորված է հատկապես դարձվածքների կիրառությամբ, որոնք, բաղադրիչների սերտաձման աստիճանով պայմանավորված, դարձվածքային միակցություններ, միասնություններ, կապակցություններ կամ արտահայտություններ են: Ներկա հոդվածում քննության ենք ենթարկելու Սայաթ-Նովայի խաղերում գործածված դարձվածքներն՝ ըստ խոսքիմասային արժեքի<sup>1</sup>:

ա) **Գոյականի արժեք ունեցող դարձվածքներ:** Այս խմբի մեջ մտնում են այն դարձվածային կազմությունները, որոնք պատասխանում են *ի՞նչ, ինչե՞ր, ո՞վ, ովքե՞ր* հարցերին և խաղերի բանաստեղծական տողերում կատարում են գոյականով արտահայտված անդամի դեր, օրինակ՝

---

<sup>1</sup> Պետք է նշել, որ հոդվածում որոշ հայերեն դարձվածքների պարսկերեն համարժեքներ ևս քննության ենք ենթարկել:

*աշխարհի մալ*<sup>2</sup> (բռ.՝ «աշխարհի ունեցվածք») «կյանք, իրականություն, կյանքի կարգ ու կանոն», *դամ ու դովրան* (բռ.՝ «ձայնակցություն և պտույտ») «ուրախ ժամանց, հաճելի պահ», *վարթի դրախտ* «վարդաստան, բուրաստան», օր.՝ «Բըլբուլին լիզու շինիցիր, դուն վարթի դրախտ իս, գոգա լ» (25), *օսկե ջուր* «ոսկեգոծելու հեղուկ», *գրոց հայերեն* «գրաբար», *ահլի շար* (բռ.՝ «արժանավոր օրենք») «արդարադատություն»<sup>3</sup>, *իդրար իման* (բռ.՝ «հավատ, համոզմունք») «երդումով հաստատած խոստում» «Կաց իդրարին, ահլի շարին», 3), *ադ ու հաց* «նշան հավատարմության, աննենգ բարեկամություն», *գարնան շունչ* «կյանքի սկիզբը» և այլն:

Ասենք, որ *աշխարհի մալ*, *դամ ու դովրան*, *վարթի դրախտ*, *օսկե ջուր*, *գրոց հայերեն*, *անգին քար*, *ահլի շար*, *ադ ու հաց*, *գարնան շունչ* դարձվածքներից ոչ մեկը Աշոտ Մուքիայանի և Մերգեյ Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» ներկայացված չէ [6, V]: Բառարանի «Հեղինակների անուններ և սկզբնաղբյուրների համառոտություններ» [6, XV] բաժնում Սայաթ-Նովայի անունը ևս հիշատակված չէ, ինչը փաստում է, որ Սայաթ-Նովայի խաղերի դարձվածքները համապարփակ ուսումնասիրության կարիք ունեն: Պետք է նշել նաև, որ Սայաթ-Նովայի խաղերի դարձվածքները բնորոշ են առաջին հերթին Թիֆլիսի բարբառին՝ այսինքն բարբառային ձևեր են: Մեկ այլ հանգամանք ևս. դարձվածաբանական բառարանի առաջաբանում կարդում ենք. «Բառարանն ընդգրկում է ժամանակակից հայոց գրական լեզվի դարձվածների ամբողջությունը, որն արտահայտված է գրական աղբյուրներում..., ինչպես նաև գավառական-բարբառային դարձվածաբանական այն միավորները, որոնք առատորեն թափանցել են գեղարվեստական գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ կամ լայնորեն գործածվում են խոսակցական լեզվում» [6, XIII]: Սրանից կարելի է հետևություն անել, որ չնայած Սայաթ-Նովայի երգերի սիրված լինելուն, դրանց լայն տարածվածությանը և համաժողովրդականությանը, այնուամենայնիվ, դրանցում գործածված դարձվածային միավորները՝ դարձվածաբանական միակցությունները, միասությունները, այսինքն՝ պատկերավոր արտահայտությունները, դարձվածաբանական կապակցությունները և այլ կազմություններ, խոսակցական հայերենում քիչ են գործածվում:

<sup>2</sup> Այս և հետագա բոլոր օրինակները ըստ՝ Սայաթ-Նովա, Խաղեր, Երևան, 1987, ժողովածուի: Փակագծերում խաղերի համարներն են:

<sup>3</sup> Մի շարք դարձվածքների բացատրությունները տվել ենք ըստ Արմենակ Քոչոյանի՝ վերևում նշված բառարանի:

բ) **Ածականի արժեք ունեցող դարձվածքներ:** Այս շարքի դարձվածքները որոշիչի դեր են կատարում և բնորոշում որևէ առարկայի կամ վիճակի որպիսիությունը, օրինակ՝ *աչկի լուս, դիրք ու ենգիդունիա* դարձվածային կապակցությունները բնութագրում են աշուղի սիրո էակին և համարժեք են «սիրելի», «թանկագին», «ընտիր» ածականներին: «Անգաճ արա, ո՛վ *աչկի լուս*» (24) բանաստեղծական տողում *աչկի լուս* փոխաբերացված լեզվական միավորը գործածված է որպես կոչական: Այն Մայաթ-Նովայի կողմից որպես կոչական է գործածված տասներկու անգամ: Համաձայն Ա. Մուքիսայանի և Ս. Գալստյանի դարձվածքի սահմանման՝ *դիրք ու ենգիդունիա* բառակապակցությունը, որն արևելյան մեղեդու անուն է, կարող ենք համարել դարձվածային կապակցություն: «Դրանք այն կապակցություններն են, որոնք կազմվում են ազատ և դարձվածաբանորեն կապված իմաստ ունեցող բառերով», - գրում են լեզվաբանները [6, IX]: Այս կազմության ազատ բաղադրիչները, միանալով *ու* շաղկապով, ստեղծել են դարձվածային միավոր, որը փոխաբերաբար նշանակում է «հաճելի», «սիրելի», «քաղցրաձայն»: Այն ևս, որպես գոյական որոշիչ, բնորոշում է սիրեկանին («*Դիրք ու ենգիդունիա, զարբար ու զար իս, գո՛վելի*», 4): Բանաստեղծական մեկ այլ տողում այս կապակցությունը ուղիղ իմաստով է գործածված և բնորոշում է երգի հանգը, որի անունը *մուսադասի* է, օրինակ՝ «Էսպես դիրք ու ենգիդունյայի հանգով, որ մուսադասի կասեն» (23): Ա. Քոչոյանն այս կիրառությունը համարում է դարձվածային: Ըստ Քոչոյանի՝ բառարանում նախորդ՝ «*Դիրք ու ենգիդունիա, զարբար ու զար իս, գո՛վելի*» (4) օրինակի կիրառությունը պետք է դարձվածային համարել, իսկ *մուսադասի* բառի բացատրությունը՝ ոչ դարձվածային [7, 61]: Դարձվածային այս օրինակը կարող ենք համարել բազմիմաստ: Ինչպես հայտնի է, դարձվածքները դասակարգվում են ոչ միայն ըստ խոսքի մասերի, այլև՝ ըստ արտահայտած իմաստների և լինում են մենիմաստ ու բազմիմաստ: Հայտնի է, որ բազմիմաստ դարձվածքները այդքան էլ մեծ թիվ չեն կազմում, և գերակշռում են մենիմաստ դարձվածքները:

Արաբերեն *փուզուլ* «մեզ, մշուշ, մառախուղ» բառով և *սպանել* բայի ենթակայական դերբայով կազմվել է *փուզուլ սպանող* դարձվածքը, որն ածականաբար բնորոշում է աշուղի խոսքը. «Խոսկըս առակով իմացի, լուսաստղ, *փուզուլ սպանող*» (49): Այստեղ *փուզուլ սպանող* դարձվածքն ունի «պարզ, անմիջական, հասկանալի» ածականական իմաստը:

*Օրը կերած* «կյանքը սպառված, օրհասը մոտ» ածականական

իմաստով դարձվածքով Մայաթ-Նովան բնորոշում է իր կյանքը, օրինակ՝ «Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ **օրըս կերած** գիդենաք» (29):

Ավելացնենք, որ *աչկի լուս, դիրա ու ենգիրունիա, փուզուլ սպանոդ, օրը կերած* դարձվածային միավորներից վերը նշված դարձվածաբանական բառարանում կա միայն *աչքի լույս* դարձվածքը [6, IX]:

գ) **Բայի արժեք ունեցող դարձվածքներ**: Այս դարձվածքներն ունեն դեմք, թիվ, ժամանակ, եղանակ և ինչպես բայ խոսքի մասը, պատասխանում են *ի նչ անել, ի նչ լինել* հարցերին:

Բայ խոսքի մասով բաղադրված դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք քանակապես գերազանցում են մյուս խոսքի մասերով կազմվածներին: Դա, իհարկե, պայմանավորված է նաև հարադիր բայերով կազմված դարձվածային միավորների բազմաքանակությամբ: Բայական դարձվածքների և հարադիր բայերի առնչությունը բավականին դժվար խնդիր է հայ լեզվաբանության մեջ: Այս մասին Ֆ. Խլդաթյանը գրում է. «Շատ հեղինակներ նույն լեզվական միավորները համարում են և՛ հարադրություն, և՛ դարձվածք: Եթե նկատի ունենանք, որ հարադրություններն էլ մեր լեզվաբանության մեջ ավանդաբար համարվում են բարդություն (իմա՝ բարդ բառ), ապա հասկանալի կլինի, որ, իրոք, խառնաշփոթ է» [3, 240]: Հարցի լուծումը թողնելով լեզվաբաններին՝ նշենք, որ մեր հոդվածում այն հարադիր բայերն ենք համարել դարձվածային կազմություններ, որոնց կիրառությունն ունի դարձվածաբանական արժեք: Այդ իսկ պատճառով ավելացվել են իմաստային խմբերը՝ հումանիշ և բազմիմաստ դարձվածքները:

Մայաթ-Նովան իր խոսքը ոճավորում և պատկերավոր է դարձնում բայական դարձվածքներով ու հարադիր բայերով: Այս շարքում մեծ թիվ են կազմում հատկապես *ածիլ, անիլ, ասիլ, գալ, ըլիլ, տալ, քաշիլ*<sup>4</sup> և այլ բայերով կազմվածները:

Բավականին մեծ թիվ են կազմում հատկապես *անիլ* բայով կազմված հարադիր դարձվածքները՝ *անմաս անիլ* «առանց հաղորդության, անօրեն կերպով սպանել, նահատակել» («Յիս քիզնից չիմ հեռանա, գուզե ինձ անմաս անին», 11), *բերանը բաց անիլ* «խոսել», *դադ անիլ* «բողոքել» (պրսկ. *դադ* նշանակում է «աղմուկ», *դադ անիլ հմմտ. բոց.* պրսկ. *dād kardan* «աղմկել, բողոքել»), *հանգ՛ անիլ* «ձայնակցել, ներդաշնակել», *տալ անիլ*

<sup>4</sup>Թիֆլիսի բարբառի առանձնահատկություններով պայմանավորված՝ Մայաթ-Նովայի խաղերում է խոնարհման բայերը *ի* խոնարհման են վերածվում:

<sup>5</sup> Հմմտ.՝ Թֆլ. բբռ. *հանգ* «երգի եղանակ», *հանգով ասել* «գեղեցիկ եղանակ երգել» [2, 639], ինչպես նաև՝ հմմտ.՝ պրսկ. *āhang* «երգ», վրց. *hangi* (< իր.), տե՛ս [8, 65]:

«կտրել, գլխատել», *տաղ անհիլ* «երգաձայն կարդալ, երգել», և այլն<sup>6</sup>:

*Անհիլ* բայական բաղադրիչով կազմված բազմիմաստ հետևյալ դարձվածքներ են. *չաղ անհիլ* 1) «թեժացնել» («Էտ կըրակըն չաղ մի՛ անի», 3), 2) «հաստացնել, ամրացնել» («Հիմքտ վերըստին նուրեցին. չաղ արին, Մոդնու սուրփ Գն ուրք», 45)<sup>7</sup>, *զայ անհիլ* 1) «փչացնել, ավերել, վնասել» («Դուն իս ասի՝ նրհախ տիղ Յարի սիրտըն զայ անին», 47), 2) «կորստի մատնել, կործանել» («Յիս կանչում իմ զայանին. Նու ու Այիբ զայ անին», 47) և այլն:

*Անհիլ* բայով կազմված դարձվածքներից կարելի է առանձնացնել *օտար բառ + անիլ* կառույցի լեզվական միավորները, որոնք քանակով գերազանցում են *հայերեն բառ + անիլ* բաղադրիչներով կազմություններին: Այսպես՝

#### **Անվանական մաս (պարսկերեն) + անիլ**

*Բաբ անիլ* = *բաբ* «համապատասխան» + *անիլ*, նշ. է «համեմատել». «Խիլքըտ հիմարին բաբ մի՛ անի» (37):

*Բանդ անիլ* = *բանդ* «կապ, հանգույց» + *անիլ*, նշ. է «կաշկանդել». «Քաղցըր լիզվով շատ ինձպիսին բանդ իս արի» (9):

*Դաղ անիլ* = *դաղ* 1) «շիկացած երկաթով այրվածք, խարան», 2) փխբ. «սրտի վերք, կսկիծ, վիշտ» + *անիլ* «այրել, վառել, խոցել». «Յարի սիրտը դաղ մի՛ անի» (3):

*Դաս անիլ* = *դաս* «ցանց, որոգայթ» + *անիլ*, նշ. է «դավադրել» :

*Դրախտի բաղ անիլ* = *դրախտի բաղ* «դրախտի այգի» + *անիլ*, նշ է. «բուրումնավետ, հոտավետ ծաղիկներով զարդարել». «Բիմըտ ու խաչկալըտ դրախտի բաղ արին, Մոդնու սուրփ Գն ուրք» (45):

*Լանգ անիլ* = *լանգ* «կաղ» + *անիլ*, նշ. է «օրորվել, շորորվել, ճոճվել». «Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ, ման իս գալի, լանգ իս անում» (31):

*Խափանգ անիլ* = *խափանգ* «վարագուրաձև եղեգնյա ծածկոց լուսամուտներին, որ իջեցնում-բարձրացնում են թոկի միջոցով» + *անիլ*,

---

<sup>6</sup> Սայաթ-Նովայի տաղերում բազմիցս հանդիպում է *ճար անիլ* հարադրությունը «օգնել» իմաստով, և որը Ա. Մ. Մուքիսայանի, Ս. Ա. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» [6, 401] ներառված է դարձվածքների շարքում: Կարծում ենք՝ այս հարադրությունը պարսկերեն համանման ձևի թարգմանությունն է, հմմտ. *chāra* «օգնություն, ճար», *chāra kardan* բոց. «ճար անել»: Այդ պատճառով, այս հարադրությունը դարձվածքների շարքում չենք դիտարկել:

<sup>7</sup> Հմմտ.՝ պրսկ. *chāgh* նշանակում է գեր ու *chāgh kardan*՝ գիրացնել):

նշ. է «իջեցնել, ծածկել». «Էրեսիտ խալըն ծածկըվում է, մագիբըս իսափանգ իս անում» (31):

**Անվանական մաս (արարերեն) + անիլ**

*Ղալ անիլ* = *ղալ* «խոսք, խոսակցություն» + *անիլ*, նշ. է «անհանգստացնել, գլխացավանք պատճառել». «Յա՛ր, յիս քիգ բարով իմ տալիս, շուտ իս գալի՛ դալ իս անում» (5), «Չի՛մ անի քալագըն, չի՛մ անի դալըն» (15):

*Ղաստ անիլ* = *ղաստ* «նպատակ» + *անիլ*. նշ. է «ջանք թափել, ջանալ». «Ղաստ արա՛ էլ լավ օրերու էդիվըն հասնիս, քամանչա» (42):

**Անվանական մաս (աղբբեջանական թուր.) + անիլ**

*Յարալու* [4, 534] *անիլ* = *յարալու* «վիրավոր» + *անիլ*, նշ. է «հոգեկան վիշտ պատճառել». «Միրտս յարալու արիբ» (56):

*Չալ անիլ* = *չալ* «պուտ-պուտ, սև ու սպիտակ» [2, 874] + *անիլ*, նշ. է «գույնզգույն ներկել». «Պատանքին մե ռանգըն է հերիք, չալ անիլըն ինչի՞ն է շահ» (44):

*Անիլ* բայով բաղադրված *բրուլե ճաղ անիլ* («բյուրեղյա ճրագ՝ լույս անել») դարձվածքում Մայաթ-Նովան կիրառում է հունարենից փոխառյալ *բրուլե* բառը: Ա. Քոչոյանը կարծում է, որ բառը հունարենից վրացերենի միջոցով է անցել Թիֆլիսի բարբառին [7, 50]:

Բացի *անիլ* բայից, առանձնացրել ենք նաև հետևյալ բայերը.

*Ածիլ* – *միտրն ածիլ* «հիշել», օր.՝ «Յիփ բըլբուլըն միտքըն ածավոեհնով կըլած թայիգուլին» (30) և այլն:

*Ասիլ* – *վայ ասիլ* «ցավակցել», օր.՝ «Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում» (39) և այլն:

*Բրոնիլ* – *բաս բրոնիլ* «վիճել», օր.՝ «Քիգիդ բաս ո՞վ կարա բրոնի՛ հազար բաբաթ բառ իս էլի» (8) :

*Դնիլ* – *բերնումը սանձ դնիլ* «սանձել, գսպել», օր.՝ «Բերնումըս դրնիմ սանձ՝ կենամ» (3) և այլն:

*Գցիլ* – *ձեռնեմեն ձիորը գցիլ* «սրան-նրան տալ, չպահել», օր.՝ «Մի՛ գցի ձեռնեմեն ձիորն, օսկե թաս իմ, Մայաթ-Նովա» (17), *ճիղը գցիլ* «տխուր տրտում լինել», օր.՝ «Է՛լ վաղ միռնի Մայաթ-Նովեն՝ ճիղըս գըցած չըտեսնե» (2), *ջուրը գցիլ* «ջրահեղձ անել», օր.՝ «Անքանար ջուրըն իս գըցի, բուրբըս տալդա, ջըրիիղիղ» (56) և այլն:

*Ըլիլ* – «լինել» – *բեղամաղ ըլիլ, դաղ ըլիլ, սիրտը փուրումը սըքուր ըլիլ* «ծանր վիշտ ունենալ, սգի մեջ լինել», *անդանակ ըլիլ* – «տանջանքով մեռնել», օր.՝ «Էշիեմետ անդանակ էլա» (28) և այլն:

**Շինիլ** – արտասուլքը արուն շինիլ «շատ ծանր վիշտ պատճառել» օր.՝ «Արտասունքըս արուն շինեցիր, խիլքըն գըլխես ունիմ տարած» (16), և այլն:

**Տալ** – գլուխը մահի տալ «ինքնասպան լինել», օր.՝ «Դուն գըլուխըս մահի կու տաս, յիս էլ քիզիդ կու միռնիմ» (2) և այլն :

**Գնալ** – մտկի հիդ էհալ «մի բանի մասին մտածել, մտահոգվել», օր.՝ «Դուն մըտկի հիդ մի՛ էհա» (4) և այլն:

**Քաշի** – ջուքամ քաշիլ «վնասվել, կորուստ ունենալ», դարդ քաշիլ «վշտանալ», օր.՝ «Էս դարդեմեն ով չէ քաշի՛ վո՛ւչ քաշե» (12), դալամ քաշիլ «նկարել», օր.՝ «Էրեսըտ խասա մուրասա. դալամ քաշիլըն ի՛նչ կոնե» 4 (51) և այլն:

Նշված համեմատաբար ակտիվ, գործուն բայերից բացի գործածվում են նաև *անցնիլ, անց կենալ, գալ, դիրջիլ, գավթիլ, թամամիլ, թուլանալ, լալ, կանգնեցնիլ, կենալ, կտրիլ, պաքիլ, սպանիլ, տընդդդիլ, փշրվիլ* բայերը, որոնք հանդիպում են մեկ-երկու դարձվածային կազմություններում, ինչպես, օրինակ՝ *գլխովն անցնիլ* «տեղի ունենալ», *խորարեմեն անց կենալ* «խոստումնազանց լինել, խոստումը չպահել», *գլուխը մահի ռաստ գալ* «վտանգների միջով անցնել», *ահուզար քաշիլ* «հառաչել, հեծեծալ», *ճամփա կանգնեցնիլ* «օգնել, միջոց՝ ճար ցույց տալ», *խորարին դրուստ կենալ* «խոստմանը հավատարիմ մնալ», *ադարք կտրիլ* «անբարեկիրթ լինել, համեստությունը կորցնել («Կըտրեցիր ադարքտ, կըտրեցիր շահըտ», 18), և այլն:

դ) **Մակբայի արժեք ունեցող դարձվածքներ**: Սայաթ-Նովայի խաղերում առանձնացրել ենք տեղի, ժամանակի, ձևի, չափի պարագայական պաշտոն կատարող մի շարք բառեր, որոնք ունեն մակբայական արժեք: Դերանուն խոսքի մասով կազմված դարձվածքներ Պ. Բեդիրյանն իր գրքում չի առանձնացնում: Դրա պատճառը հավանաբար այդպիսի դարձվածքների փոքրաթիվ լինելն է: Սայաթ-Նովայի խաղերում ևս նման դարձվածքները մեծ թիվ չեն կազմում: Այսպես, *ամեն մե* «ամեն մի, յուրաքանչյուր» որոշյալ դերանունը գործածված է «Ամեն մե մըտիկ տալով տարար խիլքըս» (61) բանաստեղծական տողում և արտահայտում է մակբայական իմաստ, այսինքն՝ կատարում է մակբայի դեր:

ա) **Տեղի մակբայի արժեք ունեցող դարձվածքներ՝ քաղաք տիլդ** «բնակավայր», օր.՝ «Թե վուր քաղաք տիլդ հանդիրիս, կու քանդիս, վար չիս անի» (1), *քաղաք քաղկով* «բոլոր տեղերից», օր.՝ «Էրեսըտ տեսնելու գու քան քաղաք քաղկով, գիդ՝ գիդի պես» (31) , *չուրս բուրք* «շուրջ, շրջա-

պատ», օր.՝ «Չուրս բոլորքըն ծաղիկնիր ին» (56):

բ) **Ժամանակի մակբայի արժեք ունեցող դարձվածքներ՝ *գիշիր-ցերեկ, տարին տասներկու ամիս***, կամ՝ ***օրըն ի օրըն*** «Օրըն ի օրըն շատանում իս, էշիսի մէջըն մողանում իս»: Այս նախադասության մեջ ***օրըն ի օրըն*** դարձվածքն ունի նաև ձևի մակբայի իմաստ և կարող է պատասխանել *ինչպէ՞ս էս* շատանում և *ինչպէ՞ս էս մողանում* հարցերին և այլն:

գ) **Ձևի մակբայի արժեք ունեցող դարձվածքներ՝ *անմիդ տիղը*** «գուր տեղը, իգուր, աննպատակ», օր.՝ «Խըմցըրեցիր անմիդ տիղըն էս աղուի թասըն ինձի» (59), ***մե դամաղի*** «անդողվելի», օր.՝ «Եկ, արի սիրտ, մընա դու մե դամաղի, Հալալ մըտիկ արա հացի ու աղի» (36) ***քնած տիղ*** «ընդարմացած», օր.՝ «Քանի գուգե քնած տիղըն իր թշնամին կուռըն կապե, էլի վիրչումըն մեյդանըն Ռոստոմի Զալուն մընում է» (52) և այլն:

դ) **Չափի մակբայի արժեք ունեցող դարձվածքներ՝ *դիփունի վըրա*** «բոլորի վրա», օր.՝ «Մարիփաթով քաղցըր լիգուն դիփունի վըրա անգին ա» (10), ***մե քիչ*** «դուլզն», օր.՝ «Մե քիչ կամաց գնա, գոգա՛լ» (23): Բանաստեղծական այս տողում ***մե քիչ***-ը կարող է կատարել նաև ձևի մակբայի դեր (ինչպէ՞ս գնա):

Ինչպես նկատում ենք, վերը բերված օրինակներում ***քաղաք տիղ, չուրս բոլորք, գիշիր-ցերեկ, տարին տասներկու ամիս, օրըն ի օրըն, անմիդ տիղը, քաղաք քաղկով, գիղ՝ գիղի պես, քնած տիղ, մե դամաղի, դիփունի վըրա, մե քիչ*** բառակապակցությունները այլ խոսքի մասերից են կազմված, հանդես են գալիս մակբային բնորոշ պարագայական կիրառությամբ և նախադասության մեջ ցույց են տալիս գործողության կատարման տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ: Այսպիսի կազմությունները Ֆ. Խլդաթյանն անվանում է «մակբայորդներ» [3, 205]: Ըստ այդմ՝ մակբայորդներով կազմված դարձվածքները կարելի է անվանել *մակբայորդ դարձվածք*: Նշենք, որ Մայաթ-Նովայի խաղերում, մակբայորդ դարձվածքների շարքում քանակապես աչքի են ընկնում գործողության ձև ցույց տվողները:

ե) **Եղանակավորողի արժեք ունեցող դարձվածքներ**: Գործողության հատկանիշ ցույց տվող բառերից՝ մակբայներից բացի, Մայաթ-Նովայի գեղարվեստական խոսքը ոճավորում են եղանակավորող բառերը, որոնք որոշ չափով մոտ են մակբայներին: «Մակբայներից, անշուշտ, պետք է տարբերել այդպիսի բառերը, որոնք եղանակավորում են նախադասությունը կամ նախադասության անդամները՝ նրանց հաղորդելով հաստատական, ժխտական, հարցական, երկբայական բնույթ, այլև ուժգնացնում,



երանգավորում են դրսևորվող իմաստը» [1, 276],- գրում է Ա. Աբրահամյանը: Սայաթ-Նովայի խաղերում գործածված եղանակավորող դարձվածքները կարելի է տեսակավորել տվյալ բանաստեղծական տողում ունեցած իմաստով:

**Աստրձուն փառք** դարձվածքն ունի «շնորհակալ եմ, գոհ եմ» իմաստը և արտահայտում է գոհունակություն, շնորհակալություն:

**Ի՞նչ ասիս, ի՞նչ անիս** – ինքն իրեն խորհրդածելու ձև է՝ «ի՞նչ հնարքի դիմեմ»:

**Ի՞նչ կոնե** – «անօգուտ է, չարժե»:

**Ի՞նչ կոնիս** – 1) «հարկավոր չէ», 2) «անիմաստ է». «Առանց քեզ ի՞նչ կոնիս աշխարհս մալըն» (15):

**Քանի գուզե** «ինչքան էլ որ, որքան էլ» – ճշգրտման և բացահայտման եղանակավորող դարձվածք: «Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի» (37):

**Նկարագրական արտահայտությամբ դարձվածքներ:** Նկարագրական, բառակապակցական, առած-ասացվածքային դարձվածքները<sup>8</sup> բավականին շատ են Սայաթ-Նովայի խաղերում: Աշուղի պատկերավոր խոսքի յուրաքանչյուր արտահայտության մեջ կարելի է գտնել մի հետաքրքիր դարձվածային միավոր:

Այդպիսիք կարելի է համարել հետևյալ օրինակները:

«Դուն իմ խիլքին մտիկ արա // Ջուրըն էկավ, գերանըս տարավ ծիղի համա իմ լալի» (46): Այս երկտողի մեջ կարելի է առանձնացնել երեք դարձվածք՝ 1) **մեկի խիլքին մտիկ անել** «մեկի կատարած անմիտ բանի վրա ուշադրություն դարձնել», 2) **ջուրը գալ, գերանը տանել** «մեծ աղետ կատարվել», 3) **ծիղի համա լալ** «ոչ կարևոր, երկրորդական բանի համար մտահոգվել», 4) **Բերնեմեն կրրակ վեր ածիլ** «շատ ճարտար խոսել» (3):

«Գուզիմ ումբըրըս հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չը քաշե» (10). այստեղ կարելի է առանձնացնել երկու դարձվածք. 1) **ումբըրը անց կացնիլ** «ապրել», 2) **օրը մունաթ չքաշիլ** «կյանքը խելացի կազմակերպել, կյանքը անիմաստ չվատնել»:

«Լըցվիլ է դոշըս ու թիկունքըս» (23): **Դոշըն ու թիկունքը լցվել**, այսինքն՝ «հասունանալ, գեղեցկանալ»:

---

<sup>8</sup> Ինչպես նշում է Ա. Քոչոյանը. «Դարձվածքների մեջ մտնում են նաև առածներն ու ասացվածքները, որոնք գեղարվեստական խոսքի ամենահարուստ տեսակն են, և որոնց մեջ ձևի ու բովանդակության միասնությունը հասնում է կատարելության» [7, 22]:

«Աշխարհս մե մագ չի պակսի» (37), այսինքն՝ «որևէ անձի կորստով կյանքում ոչինչ չփոխվել»:

«Մանդիլի գար իմ քիզ ամա» տողում կարելի է առանձնացնել **մանդիլի գար ըլել** դարձվածքը՝ «թանկագին, առանձնահատուկ լինել» իմաստով:

Նշենք, որ չնայած բերված օրինակներում առանձնացրել ենք դարձվածային միավորները, սակայն նախադասությունն ինքնին ևս ամբողջական տեսքով ունի մեկ ամբողջական դարձվածքի իմաստ:

### Եզրակացություն

Այսպիսով, Մայաթ-Նովայի խաղերում լայնորեն օգտագործված դարձվածքները, ոճավորելով աշուղի բանաստեղծական խոսքը, ժողովրդականություն են հաղորդում դրան: Գրեթե չկա մի նախադասություն, որում չլինի փոխաբերական իմաստով գործածված որևէ բառ կամ դարձվածային միավոր: Հանդիպում են նաև պատկերավոր նախադասություն-դարձվածային միավորներ: Հավելենք, որ Մայաթ-Նովայի խաղերի դարձվածքների զգալի մասը բնորոշ է միայն Թիֆլիսի բարբառին և հայերենի մյուս տարբերակներում գործածական չէ:

### Գրականություն

1. Աբրահամյան Ա. 1970, *Գրաբարի ձեռնարկ*, Երևան:
2. ԱՃառյան Հ., 1913, Հայերեն Գավառական բառարան, Թիֆլիս:
3. Խղաթյան Ֆ., 2009, *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան:
4. Մարգարյան Ա., 1966, *Հայերենի հարադիր բայերը*, Երևան:
5. *Մայաթ-Նովա, Խաղեր*, Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Հենրիկ Բախչինյանը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1987:
6. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., 1975, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Երևան:
7. Քոչոյան Ա., 1963, *Մայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանը*, Երևան, էջ 20:
8. Hasandust M., 2004, An Etymological dictionary of Persian Language, Vol.1, the Academy of Persian Language and Literature, Tehran.

## Анализ фразеологизмов стихов Саят-Новы

*Тораби Мариам*

### Резюме

**Ключевые слова:** *Саят-Новы, стих, фразеологизм, арабский, части речи, Тифлисский диалект*

В статье представлены фразеологические единицы стихов Саят-Новы. Фразеологизмы классифицированы с точки зрения морфологии и в некоторых случаях сравнены с персидскими эквивалентами. Последнее особенно важно для изучения семантических вопросов стихов и Тифлисского диалекта. Несмотря на широкую распространенность и популярность стихов Саят-Новы, используемые в них фразеологические единицы, т.е. образные выражения, фразеологические сочетания и другие конструкции, в разговорном армянском языке встречаются редко. В статье рассмотрены словосочетания со значением существительного, прилагательного, наречия, а в качестве фразеологических образований рассматриваются те сложные глаголы, употребление которых имеет фразеологическое значение. В этом контексте были добавлены семантические группы: синонимичные и многозначные фразеологизмы.

# Idiomatic Analysis of Sayat-Nova's Poems

*Torabi Maryam*

## Summary

**Key words:** *Sayat-Nova, poem, phrase, Persian, Arabic, parts of speech, Tiflis dialect*

This article is an attempt to analyze phraseological components of Sayat-Nova's poems. Idioms, classified in terms of morphology, in some cases are compared with Persian equivalents. The latter is especially important for studying the semantics of poetry and Tiflis dialect. The idiomatic units, or figurative idioms, phraseological combinations, and other constructs applied in Sayat-Nova's poetry are rarely used in colloquial Armenian, despite the popularity of his poems.

In the article, the use of compound verbs containing phraseological connotations as well as phrases with nouns, adjectives and adverbs were discussed. In this context, synonymous and phraseological units with multiple meanings were presented as two semantic groups.

Ներկայացվել է 30.09.2022 թ.

Գրախոսվել է 17.10.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.